





ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ՄԻԲԱՆԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ԿՐԹԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵԼԵԿՐԱԳՐԱԿԱՆ

ԴԱԲԱԹԱԹԵՐԹ

ՀԱՅ ԿԱՐՈՂԻԿ ԴԱՏՐԻԱՐԱՐԱՆԻ



ՀԱՍՈՒՆԵԱՆ ՏՊԱՐԱՆ
ՀՈՌՎՄ

1. Կաթողիկէ Արձագանգը առ այժմ կը հրատարակուի ի Հռոմ: Առաջին վեցամեայի բաժանորդագիւնն է մեկ մեծիս անոց համար որ ի Կ. Պօլիս՝ Կաթողիկոսարանի մէջ, իսկ ի գաւառն՝ Եպիսկոպոսարաններու կամ Առաջնորդարաններու մէջ կ'ուզեն բաժանորդագրուիլ: Ուղղակի Հռոմ դրկելու համար՝ Չորս (4) ֆրանկ է: Հասցեն է. Collegio Armeno, 31 S. Nicola da Tolentino. Roma — Երբ ի մօտ Կ. Պօլիս փոխադրուի, ծաւալն ու ձեւը, ինչպէս նաեւ բաժանորդագրութեան պայմանի վերջնականացիս պիտի ձշրուին: — Մեկ թիւը՝ մեկ դանեկան է:
2. Արձագանգը կը հրատարակուի Շաբաթ օրերը:
3. Խնքագրութիւնս պարտաւորեալ չի անպատճառ կամ նոյնութեանը հրատարակելու իրեն դրկուած ո՛ր եւ յօդուած:
4. Ատորագրեալ յօդուածոց պատասխանատուութիւնը ամբողջովին կը մնայ գրողներուն վրայ:
5. Նամակ եւ յօդուածներ կը դրկուին ուղղակի խնքագրութեան:
6. Զեռագիրներ եւ չեն դարձաւոր:
7. Մանուցեանց համար մասնաւոր պայմանադրութիւն կը կատարուի:



Սրբաբանքին որ զբնական իրեն բաժանորդներէ բնայ յետը կանոնադրապէս չեն հասնիր. իւրեքերն որ բաժանորդք հաճին ծանուցանել ճշգրտապէս որպէս իրենց իրենց պահած իրենք:

ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐԻԱԿԱՆ ՍԻՆԶՈԴՈՍ

Ի ՀՈՌԱՄ.

ՀԱՅՏԵՍԻՍԻՄ 15 — ԴԵՏԵՍԻՍԻՄ 8 - 1911

(Սիւննոյսկսի սրահսօնոյ)

Անճոն Սարկ. Գաբայեան

Տ. Զով. վ. Քիրենեան Տ. Զովն. վ. Նալպանեան

Գեորգ Գեւայ. Թեղիպաշեան

Տ. Մկրտիչ վ. Աբգարեան

Տ. Զով. վ. Զօղունի Տ. Զովն. վ. Գոյունեան

Հ. Գրիգորիս Ն. վ. Գալմեանեան

Տ. Զակար վ. Կիրակոսեան



(Սիւննոյսկսի Հարհ)

Պօղոս Պետրոս ԺԳ. Թեղեան Կ. — Պատրիարք Կիլիկիոյ

Յովսէփ Արեւայ. Թեոսորովիչ

Յուսիկ Արեւայ. Կիլիկիոյ

Լեւոն Արեւայ. Քէչեանեան

Պետրոս Արեւայ. Գոյունեան

Իգնատիոս Արեւայ. Մալոյեան

Սեփիան Եպ. Իսրայէլեան

Զակար Եպ. Թօփուզեան

Գրիգոր Եպ. Պանապանեան

Յովնաննէս Եպ. Նազկեան

Աւետիս Արեւայ. Արփարեան

Օդոսկինոս Արեւայ. Սայեղեան

Գրիգոր Արեւայ. Գովիկեան

Յովսէփ Արեւայ. Ռոմոսեան

Անդրէաս Եպ. Չէլեպեան

Յովսէփ Եպ. Մելիսեղեհեան

Զարուքիան Եպ. Քէֆլիեան

Անճոն Եպ. Պանապանեան

Յովնան Եպ. Գուգեան



ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆՔ

ԿՐԾՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ԵԱԲԱԹԱԹԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԿԱՆՆԻ

Առաջին Տարի

30 Դեկտեմբեր 1911

Թիւ 28.

ՔՐՈՄԱ Ե ԸՅՔՅԵՅՆԵ

ԵՒ ՍՁԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐԿԱԿԱՆ ՍԻՒՆՀԱԴԱՍ

Ի ՀՌՈՎՄ

(Շարունակութիւն եւ վերջ)

Քաճանայապետական յիշատակողիւրը կը թելադրէ մեզ ուրիշ խորհրդածութիւն մըն ալ, պատասխանելու համար արեւելեան հերձուածողաց ուրիշ մէկ պատճառանքին զոր յառաջ կը մղեն իբր ամենագոյաւոր փաստ մը Հռոմէն բաժնուած մնալու. կ'ուզէինք որ ստոր վրայ ալ մեծ ուշադրութիւն դարձնէին: Կ'ըսեն անոնք իթէ Հռոմայ հետ միանանք, Հռովմէական Աթոռը զմեզ պիտի կլլէ աներեւութացնէ, Արեւելեան Եկեղեցիներու իրաւունքները չպիտի ճանչնայ այլ եւս, և զմեզ լատինացիներու համար բնաւ կարեւորութիւն չպիտի տայ մեր վաղեմի և մեծարելի Եկեղեցիներուն աւանդութեանց:

Եւ ահա ինչ կը գրէ Պիոս Ժ. Քաճանայապետը Հայոց Պատրիարքին

ու Եպիսկոպոսներուն : — Յիշելէն վերջը վերայիշեալ վախճանները , որոնց համար նա , իբր գերագոյն Հովիւ ըմբռնող Եկեղեցւոյ , կը հրամայէ որ ի Հռոմ գումարուի Հայ ազգային Սիւնհոգոսը , կը յաւելու նաեւ զայս , ձեռն օրինաւոր աւանդութիւններն ու սովորութիւնները աւրապնդելու համար : Ժշմարիտ չէ ուրիմն որ Հռոմ կ'ուզէ արեւելեան Եկեղեցիներու օրինաւոր աւանդութիւններն ու սովորութիւնները չնջել , և թէ կ'ուզէ ասոնց պարտադրել լատին Եկեղեցւոյ բարեկարգութիւնը , այլ ընդ հակառակն նոյն ինքն Հռովմայ Քահանայապետը կը հրամայէ որ Հայ Եպիսկոպոսներն ի ժողով գումարուելով , իրենց Եկեղեցւոյն օրինաւոր աւանդութիւններն ու սովորութիւնները հաստատեն , ամրապնդեն և զանոնք անփոփոխելի կերպով տեւական ընելու միջոցներուն վրայ խորհին : — Եւ ինչ որ Նորին Սրբութիւնն Պիոս Ժ . կը գրէ Հայ Եպիսկոպոսներուն , արձագանգն է անոր զոր Արեւելիներուն միշտ կրկնեցին Հռովմայ Քահանայապետները . նոր հաստատութիւն մըն է՝ լատինածէս չեղող Եկեղեցեաց նկատմամբ Հռովմայ Եկեղեցւոյն ունեցած աւանդութեան , այսինքն՝ յարգել անոնց այլեւայլ ու սեպական աւանդութիւնները , միայն թէ անոնք օրինաւոր ըլլան , ուզել որ անոնց սեփական սովորութիւնները , սեփական բարեկարգութիւնը պահպանուին . որովհետեւ Հռովմայ Եկեղեցին լաւ կ'իմանայ և զիտէ թէ բուն այս է որ կը կազմէ իւր մեծագոյն փառքը , և առաւել ևս մատնանիշ կ'ընէ Եկեղեցւոյ ուստուածային միութիւնը ի զանազոնութեան ծէսերու , հնութեան յարգելի աւանդութիւններու , և ի պէսպիսութեան բարեկարգութեան , երբ այն չհակառակի Յիսուսի Քրիստոսի Եկեղեցւոյ ոգւոյն : Բացայայտ է ուրիմն որ բոլոր Արեւելեայք պէտք է ի բաց թողուն այս անհիմն երկիւղը՝ որ անիմանալի կը մնայ թէ ինչպէս կրնան լրջօրէն ունենալ , երբ Հռովմայ Քահանայապետներուն բոլոր գործերը յարգութիւն կը պատուիրեն՝ նոյն ինքն Արեւելեայ Եկեղեցիներուն ծէսերուն , օրինաւոր աւանդութեանց , սովորութիւններուն և բարեկարգութեան նկատմամբ :

Եւ սոսիկայ տեւի բացորոշ կը տեսնուի Քահանայապետական այս յիշատակագրին մէջ , եթէ ուշադրութեամբ դիտենք որ Սրբազան Պապը՝ հրամայած ատեն որ Հայ Եպիսկոպոսները Սիւնհոգոս մը գումարեն ի Հռոմ , կ'ուզէ միանգամայն որ անվթար մնայ Պատրիարքական իշխանութիւնը , իբրեւ թէ Պատրիարքն գտնուէր իր սեպական Աթոռոյն վրայ և իր թեմին մէջ , հրամայելով որ Հայ Սիւնհոգոսին նախագահէ մի միայն և անձամբ Հայ ազգին Պատրիարքը :

Եւ միտ դրուի որ արեւելեան Պատրիարքի մը նախագահութեան ներքեւ ի Հռոմ գումարուող արեւելեան Սիւնհոգոսի մը կը ձգուի բոլորովին որ ազատօրէն կարգադրէ իւր ազգին յատուկ կրօնական բաները՝ թէ եւ անոնք ամենածանր հանգամանք ալ ունենան, ինչպէս են Պատրիարքներու և Եպիսկոպոսներու իրաւունքներու որոշողութիւնը, իրենց հաւատացեալներու մատակարարութիւնը, իրենց կղերին բարեկարգութիւնը, միանձանց հաստատութիւնները, սրբազան արարողութիւնը, որոնց ամենուն վրայօք կ'ուզէ Քահանայապետը որ Սիւնհոգոսն՝ այո՛ գգուշութեամբ, բայց և այնպէս ինքն իրեն սահմանէ ի մեծագոյն փառս Աստուծոյ, և ի բարգաւաճանս պայծառութեան Հայ Եկեղեցւոյ, և Հայրերուն գործէն կը յստայ ամենափրկարար պտուղներ:

Կ'աղաչենք մեր արեւելցի եղբայրներուն որ ուշի ուշով և հագուց անկեղծութեամբ կշռեն զայս, մանաւանդ անոնք որ կը գահերեցին այլ և այլ չմիացեալ Եկեղեցեաց:

Ե՛րբ անոնք սէր կը սնուցանեն իրենց Եկեղեցեաց, զստնան վերջապէս՝ այն Կ'հնդրանին որմէ կը հաղորդուի ամէն Եկեղեցեաց կեանք և փրկութիւն. և, մէկդի թողով ամէն երկիւղ, ի մասնաւորի Յոյն Եկեղեցին համոզուի որ միայն Հռովմայ հետ միանալով կարող պիտի ըլլայ վերստանալ իր վաղեմի փառքը, այն իրաւունց պաշտպանութիւնը զորս կրտսնացուց, և ձեռք բերել այն ազատութիւնը զոր այս օր չունի, և զոր պաշտպանելու համար իր հին սուրբ Հայրերն ու Վարդապետները այնչափ պայքարեցան, և զոր փրկելու համար՝ երբ գեռ սրբազան միութիւնը չէր խորտակուած, այնչափ անգամ Արեւելք բողոքեց ի Հռոմ, որ միշտ վրէժխնդիր պաշտպանն է ազատութեան ամէն Եկեղեցեաց, որոնք Յիսուսի Քրիստոսի ընդհանրական Եկեղեցւոյն մասերն են:

ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ ԱՌ ՍԻՒՆՀՈԴՈՍ

(Շարունակութիւն եւ վերջ)

Այսքան բարձր և գոռարին պարտուց կատարման մէջ, այսչափ խստամբեր առաքինութեանց գործադրութեան մէջ, այնչափ անխնայ պաշտպանութեան մը հետապնդութեան մէջ, հնար է երբեմն պիտի զգայք որ ձեր ոյժերը կը սպառին, ձեր

սիրտը կը վհատի, ո՛հ, այն ատեն դարձուցէ՛ք, ո՛վ մեծարեալ Հարք, դարձուցէ՛ք ձեր նայուածքներն ի բարձունս, որովհետեւ կը մերձենայ ձեզի աստուածային օգնակա- նութիւնը: Արիաքար յառաջացէ՛ք, նետելով Աստուծոյ վրայ՝ որուն համար կը մար- տնչիք ու կը չարչարուիք, ձեր ամէն վիշտը, ձեր ամէն հոգը. Նա կը միտցնէ յին- քեան հօր մը կորուլը և մօր մը գութը. խանդակաթ սիրով պիտի պաշտպանէ զձեզ, և թոյլ չպիտի տայ որ ինչաք կործանիք. « Զամենայն հոգս ձեր ընկեցե՛ք ի նա. զի նա՛հ որ հոգայ վասն ձեր » (Անդ. 7.):

Վերջին յանձնարարութիւնն մըն ալ կ'ընէ ձեզ Ս. Պետրոս, այս ինքն թէ՛ արթուն ըլլաք և հսկէք. և սատանային՝ որ առիւծի մը նման կը մռնչէ ու ամէն կողմ կը դառ- նայ ու կը փնտռէ ուտելու որս մը, զիմադրէք քաջութեամբ և հաւատքով. « Արքուն շեռո՛ւք, հսկեցե՛ք. զի ոստիւն ձեր սասանայ իբրեւ զառիւծ գոյհ, շրջի եւ խնդրէ քե զո՛ կրակիցէ. որուն ի դիմի հատկանիցիք հաստատելով հաւատով. գիտացիք զնոյն անցս չար- չարանաց՝ եղբայրութեան ձերոյ յաշխարհի յանձնին կատարեալ » (Անդ. 8-9.): Երբեք, ինչպէս այսօրուան օրս, կատաղութեամբ յարձակումներ գործած չէ՛ր սատանան, ա- մէն կողմ վազելով, հոգիներու գէժ սովալլուկ և մռլեղին անօթութեամբ: Զուռի հան- զիստ, չուռի դուռ և դադար, մինչև որ չգիշատէ ու չկլլէ Բրիտտոսի ոչխարները: Եւ առանձինն չէ որ կ'աշխատի. իր արբանեակները կը լեցնեն զաշխարհ, ջանալով իրենց որդայթներովն չըջապատել զեկեղեցիին: Կը հասկնաք, ո՛վ մեծարեալ Հարք, թէ որո՞ւ վրայ կ'ուզեմ խօսիլ: Կը խօսիմ այն ամպարիշտ և անամօթ աղանդին վրայ. որ կ'ու- ղէ ամէն հոգւոյ վրայ դնել իր լուծը: Իւր նպատակն է ջնջել հաւատքը, զրկել հո- գիները խորհուրդներէ, սատանան տեղաւորել փոխանակ Բրիտտոսի Ամենահօգօր են միջոցներն զորս կը տրամադրէ. ոսկի, պատիւ, տպագրութիւն, այնչափ մեծ և ընդ- հանրական է իր բռնակալութիւնը, որ կարծես բոլոր աշխարհը պիտի պատէ. ուս- տի ինքնաբերաբար ամէն քրիստոնեայ սիրտ կ'արձակէ Բրիտտոսի տաղնապալից ա- զաղակը. « Այս է ձեր ժամ եւ իշխանութիւն իսաւարի » (Ղուկ. իր. 53.): Մի՛ վախաք սակայն. այսքան վտանգէ ազատելու միջոցը և հնարքը կը մատակարարէ ձեզ Առա- քեալը. Արթուն եղէ՛ք. հսկեցէ՛ք միշտ. մի՛ քնանաք ձեր վտանգներուն վրայ. հսկե- ցէ՛ք. և դուք ու ձեր հօտը՝ պիտի պատսպարուիք չարին նախատինքներէն: Խթան և օրինակ ըլլայ ձեզ առ հասարակ բարի օրինակն ամէն ժամանակաց ամէն քրիստոն- եայներուն. հալածեալք, չարչարեալք, նեղեալք, և սակայն յաղթեցին:

Բայց այս յաղթութիւնը ձեռք բերելու համար, պէտք է, ո՛վ մեծարոյ Հարք, որ միացած մնաք Պետրոսի հետ, խորհրդական նաւուն մէջ որոյ ուղղիչ կարգուած է ինքը: Ինչպէս օր մը Նոյեան տապանին մէջ ժողովուեցան ամէն կենդանիներն որոնք պիտի չկորսուէին համաշխարհային ջրհեղեղին մէջ, այսպէս ով որ աղետալի կործա- նումէ մը պրծիլ կ'ուզէ, պէտք է որ ասպաւինի հիմա այս նաւուն մէջ: Զեր լեռներուն բախտն եղաւ ի հնումն սոսկալի աղէտքէն վերջը ընդունիլ փրկութեան տապանը. հիմա Վատիկանեան ժայռին խարսխած է Պետրոսի նաւը, որուն վրայ թն ապարդիակ կը սաւառնի խորհրդաւոր աղանին, աւետարեւր խաղաղութեան և անդորրութեան: Միացած կեցէ՛ք, ուրեմն այն նաւակին նաւապետին, անոր առաջնորդութեան տակ անխառն պիտի կտրէք անցիւր աշխարհիս փոթորկալից ծովը:

Ստոյգ է որ պիտի չսլակին ձեզ պատերազմներ և հարստանք. բայց մի՛ վախ-
նաք, Հա՛րք պատուականք, այս հալածանքն ու պատերազմները նախապէս գուշա-
կեց Քրիստոս (Յովհ. ԺԳ. 33.)։ « Յաշխարհի աստ նեղութիւն ունիցի »։ Բայց յաղթու-
թիւնը ապահովուած է. « այլ փաշտեցաւո՛ւք, զի ես յաղթեցի աշխարհի »։ Ասոր հա-
մար թոյլ տուէ՛ք որ լմնցնեմ այն խօսքերով որովք Ս. Պետրոս վերայիշեալ թղթոյն
մէջ կը քաջալերէր ձեր փառապանծ նախնիքը, ճիշդ վերջնական յաղթութեան վրայ
կատարեալ ստուգութիւն և ապահովութիւն ունենալով։ Աստուած որ աղբիւր է և
սկիզբն ամենայն շնորհաց և ամէն առաքինութեանց, որմէ կը պարգևին համբերու-
թիւնն և արիութիւն, որոնք ձեզ այնքան հարկաւոր են։ Աստուած որ Յիսուսիւ Քրիս-
տոսիւ կոչեց զձեզ իր յաւիտենական փառացը՝ կարճ ու անցաւոր վիշտերու միջոցով,
պիտի ամբասնդէ զձեզ ի հաւատոս, պիտի սփռի զձեզ յուսով, պիտի կատարելա-
գործէ զձեզ ի սէր. և այսպէ՛ս պիտի հասնիք ընդունելու յերկինս անանց պսակը.
« եւ Առօրեայ ամենայն շնորհաց, որ կոչեաց զձեզ յիւր ի յաիսեմական ի փառսն Քրիս-
տոսի Յիսուսի, որուն փոքր մի և շատ քան յարշարակիցի, նա կազդուեցուցեց, կատրու-
ցուցեց, հաստատեց արասցե. նմա իշխանութիւն եւ փառք յաիսեման » (Անդ. 10-11.)։

ՆՈՐԸՆԾԱՅ ՔԱՀԱՆԱՅԻ ՄԸ

ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ ՆԱՄԱԿԸ

Հասարակութեան կրօնական և ներքին գործերէն՝ Եպիսկոպոսի հե-
ռու մնալը անտարակսյս վնաս մըն է՝։ Ձեռնհասութիւն չունիմ այդ կէտին
վրայ սոքկէ աւելի ըսելու, և աւելին, ըստ կարծեացս, յանձնապատաս-
նութիւն կ'ըլլայ։ Բայց մի՛թէ քահանային պարտքը չէ՞ բողոքել հան-
րութեան առջին։ Հասկցնել ժողովրդեան այդ անձանց ըրածին անիրա-
ւութիւնը, անկարգութիւնը։ Ձգնել մեր անձը մէկդի։ Ու՛ր կը մնան սա-
կայն, Ձեզ կը հարցնեմ, ճշմարտութիւն, կրօնքի յարգ, քահանայութեան
պատիւ։ Հոտեղ՝ խոհմութիւն տուրկելը, ճշմարտութեան չէ։ Երբ
հրգեհի տուլն ենք, պէտք է կրակը մարել ջանալ և չապտել որ կործա-
նիչ տարրը ամէն ինչ լափէ։ Արդ եթէ թոյլ կը տրուի ժողովրդեան յա-
ռաջանալ այդ սխալ ճանապարհին մէջ, օր քան զօր տագորուի իր թիւր
համոզումներով։ Տրամաբանութեան հակառակ բան չէ՞, կեղծ չէ՞, յետոյ
լուծութեամբ ցաւ, տագնաոնք յայտնել, երբ քառասունը ութ տարի թեմին
ծառայող ինքնազոհ քահանայ մը, հիւանդ, առաջնորդարանի խցիկէն կը

վճարողի անգթօրէն, երբ ձայնաւոր պատարագ, քարոզ խորխտանօք կը դադրեցունին, գիւղերու մէջ քահանայք հալածանաց կ'ենթարկուին, պատիւնին գետնաքարչ կ'ըլլայ: Երբ Պ. Կաթողիկոսի հովուական թուղթը բռնին վրայէն կը յափշտակուի: Այս՝ պարագաներ են ուր պէտք է խօսի քահանայն Աստուծոյ: Եթէ լռէ քահանայն, պարտագանց կ'ըլլայ: Գիտենք Քրիստոսի անուտ խօսքով որ Քահանային իշխանութիւնը, բովանդակ կեանքը և մրցանակը Աստուծոյն են և ոչ աշխարհէս: Նոյն պարտքերը կատարելու համար Սրբազան Քահանայապետները բանտերը մտնելու չի վարանեցան: Յիշենք նաև Գողգիտի և Փորդուկալի կղերին գիւցազնական օրինակը: Առանց պայմանի, առանց քննելու թէ եպիսկոպոսները իրենց մէ աւելի կամ նուազ խերացի կամ կարող են, անոնք խմբուած իրենց առաջնորդաց շուրջը անառիկ բերդի կը նմանին: Նիւթական տհազին վնասներ իրենց համար նշանակութիւն չունին: Մարագի մէջ անդամ կը պատարագեն այդ՝ Բայց միանգամայն այս նշանաւոր արժանիքը ունին որ՝ կրօնի և եկեղեցական իշխանութեան գրօշակը՝ ժողովրդեան վերև լուսափայլ կը ծածանի և ուղեցոյց է. աշխարհականութեան ճախ տխտը իրենց եկեղեցւոյն մէջ մուտք չի գտներ: Այսպիսի ընթացքը տէրաւերական ըլլալէ հռի, ինչպէս մէկը կը կարծէր պերճախօսութեամբ ըսել, կաթողիկէ է: Պարտաւարեալ խտտովանելու ենք որ եթէ մենք ալ նոյնօրինակ վարմունք ունենայինք, ներկայիս եպիսկոպոսաց և մանաւանդ Նաիրապետութեան Գլխոյն դէմ ժողովրդական յամառ հասանքներ պիտի չի գտնուէին:

Գարնոյ մեր Հասարակութեան ղեկավարներուն սխալ շուղի մէջ դառնուին տկներև ըլլալով, ստիպուեցայ իրենցմէ հեռու մնալ: Ջանացի դպրոցներու մէջ աշխատիլ ողջամտութիւն և տռաքինութիւն մշակել տղայոց հագոյն մէջ: Ջի հասարակութիւնը մանկութեամբ կը նորսգուի: Հալածանքը մեր Տիրոջ և մեր բաժինն է: Աշխարհիս երեսը քաւելու դերն ունինք մենք: Անսահման գոհ ըլլանք ուրիմն երբ հակառակութիւններու հանդիպինք: Բաւ է որ ճշմարտութեան պահապան եկեղեցին յողթանակէ:

Արժանահաւատ անձանց պտտմածին համեմատ Եպիսկոպոսն իսկ, եկեղեցւոյ դուռը խուժանի նման ժողովուրդէ կոպիտ խօսքերով կ'անարգուի: Ուղղափառութեան հակառակ թերթեր՝ քաւելու աղմուկով կը պատմեն այդ դէպքը՝ իրր կաթողիկէ հասարակութեան պարծանքը: Եպիսկոպոսի թոյլ ըլլալը, լու վարիչ չ'ըլլալը բարձրագոյն իշխանութեան քննել տնկ է: Ամենուն պարտքն, ո՛ր և է կերպով, կաթողիկէ եպիսկոպոսի լը-

խանութիւնը, արժանապատուութիւնը պաշտօնականէն էր: Ափսո՛ս, հասարակ զգացումներու մեծ կտրեւորութիւն տրուեց է ինչպէս կ'երևի, որով եւ պիտիպոստական աստուածային իշխանութիւնը՝ անձէ չեն կրցեր զատել. եկեղեցական սրբազան պետութիւնը՝ ընտանիքի անուան հետ շփոթեր են: Օրէն է՝ Մեծաւորի դէմ գիմել օրինաւոր բարձրագոյն իշխանութեան. միշտ անխոհեմ և սխալ՝ այդ գործին մէջ ժողովրդեան միանալ ու ճիշտ կրօնական յեղափոխութեան առիթ ըլլալ: Լաւ է յիշել հոս՝ Լեւոն ԺԳ-ի սարսափ ազդող այն խօսքերը (չրժ. ԹԳ. Nobilissima) զորս Պիոս Ժ. կը կրկնէ (չրժ. ԹԳ. Sacrorum Antistitum) « Քահանայից նուիրական ըլլայ իրենց Եպիսկոպոսաց իշխանութիւնը: Հաստատ գիտնան որ քահանայական պաշտօնը՝ երբոր անոնց վարչութեան ներքեւ չկատարուիր, ո՛չ սուրբ, ո՛չ ըստ բաւականի օգտակար, ո՛չ ալ ազգամիտ կրնայ ըլլալ »:

Այժմ՝ համառօտիւ քննենք տեղեկագրին մէջ պատմուած խռովութեանց հետեւանքները: Ասոնք Կարնոյ մէջ եկեղեցական Նուիրապետութիւնը քայքայելով, կրօնի խնդիրներու մէջ աշխարհականների ներմուծելով երկու ցաւալի հետեւութիւն յառաջ բերեր են: Որոնք որ պատճառ են ստանձնուած պատասխանատուութեան մտածեն:

Առաջինն՝ հերետիկոսական այս համոզումը տարածուած ժողովրդեան մէջ թէ ինքը վարչութեան իշխանութիւն ունի եկեղեցւոյ մէջ և ուստի ասոր Պետերը, պաշտօնեաները իրմէ անկախ չեն: Ժողովուրդը՝ լաւ և ազգը կ'ուզէ... չի ուզեր...: Եւ ամէն ինչ վճռուած նկատուել է: Օր մը այդ ազգը պիտի ըսէ. Սուրբ Աւետարանի գործնական կեանքի պատկանող այս ինչ էջը կ'ուզեմ... չեմ ուզեր... և զայն կը պատռէ: Արդ այս ամէնը ուրիշ բան չէ, եթէ ոչ բողոքական հակաքրիստոնէայ ազանգը: Ուշագրութիւն ուրեմն՝ Աղգէն բնապաշտ լրագիրներ այդ եղբակացութիւնը ամէն օր ժողովրդեան կը ցուցնեն:

Երկրորդն՝ որ միանգամայն առաջինին արդիւնք կրնայ նկատուել. քրիստոնէական կեանքի նուազումն է: Կրօնական ասպարիզի մէջ խառնակութիւններ գիտելով՝ ժողովուրդը տկարացեր է կրօնական իր համոզմանց մէջ: Կրօնքը միշտ աստուածային հաստատութիւն մը չէ մնացիր իր մաքին առջև: Սովորութեան հնազանդելով առհասարակ կիրակի և տօնի օրեր. պատարագի կ'երթան: Շատերը, մանաւանդ իգական սեռի մէջ տարին երկու երեք անգամ սուրբ խորհուրդներու կը մերձենան: Սակաւութիւն են սակայն անոնք որ՝ առօրեայ կեանքի մէջ Աստուծոյ պատուիրանները խղճիւ յարգեն, հետեւին անոնց նշանակած շաղկին:

Ամբողջ յոյսը կեդրոնացած է ուրեմն Ամեն . Գերջ . Հոգևոր Տիրոջ վրայ : Ինքը գթայ Կարնոյ Կաթողիկէ հասարակութեան : Արդէն իր Հովուական թուղթը սկսեւ է ճշմարիտ վերականգման գործը մտքերը լուսաւորելով : Թախսանձանօք կը հայցեմք նորին Հայրութենէն որ՝ վերահաստատէ Նախնայեանութիւնը և եկեղեցական վարչութիւնը : Հրամայէ գործադրել կանոնական օրէնքները սրունք քսան դարէ ի վեր աղդու կենսատու փորձուած են :

Կարևոյ նորընծայ Քահանայ մը .

ՆՈՐԱՆՏԻՐ ԵՓՐՍԿՈՊՈՍՈՑ ՀԱՆՐԱՊ

ԻՐԵՆՑ ԹԵՄԵՐՈՒՆ ՎԵՐԱԲԵՐՈՒՄԸ

Մարտիկէն հասած է հետեւեալ նամակը .

Առ Ամենապատիւ Գերեջանիկ Հոգեւոր Տէր

Տէր Պօղոս Պետրոս ԺԳ . Թերզեան

Կարողիկոս-Պատրիարք Տանն Կիլիկիոյ

ի Հռոմ

Ամենապատիւ և Գերեջանիկ Հոգեւոր Տէր

Անպատոււմ ցնծութեամբ ընդունեցանք Ձեր պատուական թուղթն զոր կնքած էիք ի ՂԿ Հովսեփեանի , որուն մէջ բարեհաճած էր Գերեջանիկ Տէրդ աւետել Ձեր սրբւոյ՝ Արհի . Իգն . Վ . Մարտիանի եպիսկոպոսական Օծումը . որուն արժանաւորութիւնը լաւ ճանչնալով , ի տրիտուր արդեանցը , հաճեցաւ Առաքելական Գահը և Ամենապատիւ Տէրդ կարգել զինքը Հայր և Հովիւ այրիացեալ թեմիս :

Ահա անգամ մըն ալ երկնակառարն Մարտին բախշն ունեցաւ ցնծութեան զգեստներ հագուելու , հազիւ թէ Յաւիտենական Քաղաքէն աւետարիւր յուսոյ և մխիթարութեան նշոյլն ցոլացաւ՝ Եկեղեցւոյ Մօրն մերոյ ժպտով , այո՛ , մեր հայրենեաց և մեր հայ Կաթողիկէ Հասարակութեան ծոցին մէջ բերկրութեան և յառաջադիմութեան յոյսը՝ վարդամատն արշալուսոյ հանգունատիպ , առկայծեալ արծարծեցաւ :

Թէպէտև մեր ամենուս սրտերը տրոփեցին թնդացին ի կայտիւ, ոսկոյն և այնպէս թո՛ղ լռեն անսուրբ Մուսայք ի Պառնասեան կատար, անոնք թերակատար կը նուագեն երգեր: Մեր բերանները լցուած են սրբազան օրհնութեամբ, ու մեր սրտերը կը բաբախեն ցնծութեամբ այս անտկնկալ բարեյաջողութեան համար. իրարու խնդակից կ'ըլլանք մենք, և կը պատրաստուինք յարգանօք ողջունելու մեր Օծեալ Հովիւը. և միանգամայն կը համարձակինք որդիարար Հովուապետիդ պարգելու մեր ծայրալիւր երախտապարտութիւնն ու վատահութիւնը, այնքան խնամոցդ ի փոխարէն:


Պաշտաման և գործոց և ճգանց տապարէզին մէջ՝ մեծ և արի Հոգեւոր Տեառնդ խորհուրդներն մեզի խրախոյս և քաջալիրութիւն կուտան. և տաով վերնախնամ աստուածային Տեսչութեան անպակաս հագածութեանը մէկ գրաւեկանն ունինք. իբրև թէ նոր Լուսուորիչ մը կը հանդիսանայ հասարակաց Հայրդ, և զուարթացեալ կը տքնի այն հօտին վրայ որ դրուած է ընդ հովանեաւ ոքանչելի Հովուապետիդ:

Պարգեւէ՛ մեզ Տէր՝ Մեծի Լուսուորչի շնորհքներէն, որպէսզի ի մխիթարութիւն Անոր և նաև Հօրդ իսկ սրտին, կարող ըլլանք նմանիլ Անոր վարույց, կարգաց և առաքինութեանց: Եւ Գերերջ. Տեառնդ կեանքը աւելցնէ, որպէսզի յամայր ամս կարող ըլլաք ուրախանալ Ձեր սիրելի զաւակաց վրայ, որոնք միաբան սիրով զօգուած են Առաքելական Գահուն, որոյ ոտից առջև կը պարզենք մեր անպակաս հաղանդութիւնն՝ նաև Նորա Գերագոյն և անընդմիջական որ և իցէ կարգադրութեանց:

Մերազիր յարգանօք և համբուրիւ Ս. Աջայդ, թախանձագին կը հայցենք Ձեր Հայրապետական Օրհնութիւնը, և եմք ևն:

Մանպուտ 2 Նոյեմբեր 1911

կը հետեւին usnruqrnpիւնի բոլոր քահանայից, ընդ որս նաեւ Վ. Հ. Պօղոս վ. ի Գասպարեան, Մխիթարեան Վեցեկոյ ապա եւ կնիռած usnruqrnpիւնի համօրէն աշխարհական Ժողովականաց.



ՏԵՂԵԿԱՊԵՐԱԿԱՆ

Շարաթ առաւօտ, Գեղտ. 23, մեկնեցաւ դէպ ի Լիվոնոյ՝ Արհի. Գրիգոր Եպ. Պահապանեան հոն իր գործերը կարգադրելով ուղեւորելու համար իր վիճակը Տասն և վեց տարիներ շարունակ ժողովրդապետական պաշտօն վարած է Լիվոնոյ Հայ Կաթողիկեայց եկեղեցւոյն մէջ: Արհի Եպ. իւր առաքինի վարուք և եռանդուն գործունէութեամբ և ազնիւ բնաւորութեամբ ու խոնհմութեամբ այնպէս գրաւած է անխտիր ամենուն սէրը, որ բացարձակապէս կը գուրգուրան իր վրայ: Իր եպիսկոպոսացման լուրը զլրգեց քաղաքը. և շնորհաւորութիւններ տեղացիներ գոգցես: Զարմանալի բան է որ Կղերը, առանց բացառութեան, մրցեցաւ սէր և յարգանք արտայայտելու իրեն պատրաստած են այլևայլ ընծայներ իրեն մատուցանելու համար: Իսկ ամէն անկալութիւնը զանցաւ քաղաքին վիճակաւոր՝ Արհի. Սպառաշինի վերաբերումը. սէր ու բոց են իր գլուխ գործոց նամակներուն խօսքերը զորս գրեց ետեւէ ետեւ. գեղեցիկ և ազնիւ ընծայով մը պատուեց զինքը կրկին ու կրկին հրաւիրեց ի Լիվոնոյ, յանպատում միտմարութիւն իր սրտին ինչպէս կը գրէր: Իսկ Գրիգոր Եպ. ին համեստութիւնը երկար տատամեցաւ և դիմադրեց թէ՛ վիճակաւորին թէ՛ Կանոնիկոսաց. ժողովրդապետաց և քահանայից և թէ՛ ժողովրդականաց շերմաջերմն և աղաչաւոր հրաւերին որպէս զի ցերեկ ատեն մտնէ քաղաք. սակայն հրաւերին պնդումները հեռագիրները այնչափ շատ և այնչափ պարտաւորիչ կերպով և ազնիւ ոճերով կրկնուեցան, որ հարկ դատեց վերջապէս յանձնուիլ այս վտախափանաց. յաղթական ցոյց մըն է որ օտար հաւատացեալք պիտի կատարեն Հայ Եպիսկոպոսի մը: Ազգիս համար այսքան պատուոյ և արժանեօք շահուած այսչափ համարումի առջև կ'արժէ ապշահար ըլլալ և յուզուիլ:

Մենք սակայն սիրայօժար կը շնորհաւորենք այն թիւը, կաթողիկեութեան մէջ փառապանծ Անկիւրիան, որ վերնախմամ Տեսչութեան անակնկալ տրամադրութեամբ արժանացաւ այսպիսի Հովիւ մ'ունեալ: Վստահ ենք որ Կղեր և ժողովուրդ պիտի փարին իրեն անբաժան սիրով: Երկայն տարիներ պահպանէ Տէր ազնիւ Հովիւը իւր սիրեցեալ հօտին հետ:

— Ուրախութեամբ կ'իմանանք որ Ս. Քահանայապետն հաճած է ուղղել տու Հայ Կաթողիկէ, Կղերն ու ժողովուրդն խրատական թուղթ մը: Քահանայապետական այս բարձր բարեացակամութեան ապացոյցն, որ Սինոդոսի մեծ գործէն վերջ, հրապարակաւ կը հաւատտէ Եկեղեցւոյ Գերագոյն Գլխոյն հայրախնամ հագածութիւնը մեր վրայ, անշուշտ պիտի գտնէ արժանաւոր ընդունելութիւն տմբողջ մեր Հասարակութիւնէն:

— Սինոդոսական Հարք չի ցրտած իրենց ժողովատեղիէն կրկին հաւաքական նամակներ ուղղած են տու Հայ Կաթողիկէ Հասարակութիւնն. երկուքն ալ մեծապէս շահեկան են և խոհուն մտքի գործ, կը մաղկենք որ անոնց բացայայտ, որոշ և ուղիղ բովանդակութիւնը հասարակութեան խաղաղութիւն պարգեւէ և ծաւալէ անոր մէջ վստահութիւն առ իրենց հովիւներն, որոնք արժանի են անոր:

— Զեռքերնիս հառաւ « Լուսաշուիղ Ազատութեան Եկեղեցւոյ » թերթ մը, յորում գրչի ու մտքի կ'ըրով միացած ճշմարտութեան սիրով տաք սրտի, ճշմարիտ ազատութեան, թիւրիմաց ազատութեան նկարագրին ընդէլէ վերջ, կը խօսի ազգային կանոնագրի հին ծրագրոյն վրայ. որսւ մատին

ըստեցաւ և դեռ կ'ըսուի որ Հռովմէն ու Բ. Դռնէ հաստատուած ըլլայ . կը ցուցնէ որ նա ոչ Հռովմէ, ոչ ալ Բ. Դռնէ բնաւ հաստատուած չէ և այսպէս կ'ըմբերանէ անգամ մ'ալ սուտ զրոյցներ : Կը խնդակցինք Սուրէն Պահլաւունի հեղինակին հետ և կը մաղթենք իրեն յարստեռութիւն նման տետրներ հրատարակելու և տարածելու ամէն գին , որով գործակցած կ'ըլլայ Արձագանգիս ալ գործոյն :

— Ամեն. Հոգեւոր Տէրն , Արհի . Արհի . Արփիարեան Աւետիս Արքեպս . Ռոքոսեան Յովսէփ Արքեպս . Քէչէճեան Լեւոն Արքեպս . Անտոն Պահապանեան Եպս , և Արձագանգիս խմբագրապետ Թէրզիպաշեան Գէորգ Գերայայծաւ Մննդեան Բ . օրը մեկնեցան զէպ ի Պոլիս — նոյնպէս մեկնեցաւ ի Վիեննա Արհի . Գրիգոր Արք . Գովրիկեան , Ընդհ . Աբրայ Մխիթարեանց Վիեննայի :

Փ . Պիսկիֆի

Տնօրէն Պատասխանատու

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Roma e l'Oriente Ազգային Պատրիարքական Սինոդոս ի Հռովմ .	հջ	337
Բանասիրութիւն առ Սինոդոս	»	339
Նորընծայ Բանաստեղծի մը Տեղեկագրական Լուսակը	»	341
Նորընծայ Եպիսկոպոսաց հանդէպ իրենց քաներուն վերաբերումը	»	344
Տեղեկագրական	»	346

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՎԵՅՄԱՄՆԱՅ ԱՐՁԱԳԱՆԳԻ

Զօն առ Սրբազան Բանաստեղծական Պիոս Ժ .	
Զօն առ Ամեն . Պօղոս Պէտրոս ԺԴ . Թերզեան Կար . Պատրիարք	
Մեր ծրագիրը .	հջ. 1
Կրօնք .	հջ. 5
Կարողութեան կոնդակի վրայ տետրիւն .	հջ. 8
Մեկնութիւն աւետարանի .	հջ. 13 32 76
Այլեւայլ .	հջ. 19 44 69 78 91 105
Ապօրինի եւ անարժան յայտարարութիւն մը .	հջ. 23 51 64
Փորձական Եպիսկոպոսաց Բողոքը .	հջ. 26 66 75 95 137
Տեղեկագրական .	հջ. 29 40 52 67 90 104 129 154 164 176 191 199 240
	250 298 336 341 345

- Ծանցապատճառք Մայրաշէղորքիւններ *էջ* . 33
Հանածոդով Ամենասուրբ Հաղորդութեան ի Մասիւ *էջ* 35 47 59 71 83 119
Թեմերու Զայնակցութիւն Կաթողիկոսական տառնադրութեանց *էջ* . 42 57 87
102 114 126 140 165 189 224 275
Ամենապ. Թեղեան Կաթ. Պատրիարքի մէկ պատասխանագիրք *էջ* 88
Լիպէրաշիզմ Թօխունու *էջ* 99
Հառաչանք առ Մարիամ — Վերափոխեան Տօնին առթիւ *էջ* 102
Պատասխան առ դիտող *էջ* 107 122 131 150 158 170
Խոստովանանքի կնիքին նոր մէկ յաղթանակը *էջ* 112
Քանի մը խօսք առ զօգոր Եղեղեան Էփէնսի *էջ* 115
Կ. Պատրիարքական Սինոդոս ի Հոռոմ *էջ* . 142 143 155 167 202 203 241
265 277 289 301 313
Սրբ. Քահանայապետ Պիոս Ժ. *էջ* . 148
Հին Կաթողիկէի մը Դարձը *էջ* . 162
Դաղդիոյ Կաթողիկոսաց Եանակն առ Եպիսկոպոսուն Բորդուգալի *էջ* . 174
Դերեան Կաթողիկէ Տարեկան Ժողովն ի Մագունիա *էջ* 176
Ամենապատիւ Կաթողիկոսին նոր Կոնդակին վրայ խորհրդածութիւն մը *էջ* . 179
Քօնս վե միլիթրէր *էջ* . 184
Եաթոյ կամ կրօնական տարաւի բողոքականութեան մէջ *էջ* . 188
Ամենապատիւ Կաթողիկոսին Կոնդակը *էջ* . 214
Երկու Եանակներ *էջ* . 217
Մեկտեղեան Եանակ մը *էջ* . 220
Զօն առ նորածին քերթն Արձագանգ *էջ* . 223
Նորընտիր Եպիսկոպոսաց Զեռնադրութեան Հանդէսը *էջ* . 227
Լուսաբանութիւն մը *էջ* . 245
Պօսիւնի Յիշատակարանը *էջ* . 253 292
Քահանայապետի Անպապութիւն եւ Բարեկարգութիւն *էջ* . 256 272 284
Զօն առ Նորընտիր Եպիսկոպոսուն *էջ* 259
Կաթողիկոսական Սինոդոսի առթիւ — Խորհրդածութիւն մը *էջ* 260
Նորընտիր Եպիսկոպոսաց հանդէս իրենց քեմերուն վերաբերումը *էջ* . 269 299
308 344
Քարոզ Ս. Խորհրդոց վրայ *էջ* . 278 291
Roma e l'Oriente եւ Ազգային Պատրիարքական Սինոդոս ի Հոռոմ *էջ* . 282 337
Կաթողիկոսութեան (Consistoire) *էջ* . 304
Քանապատիւն առ Սինոդոս . *էջ* . 321 339
Քահանայապետական Ունկեղութիւն *էջ* . 325
Խորհրդածութիւններ *էջ* . 330
Քահանայապետական Լ. Հայ Վարժարանին մէջ Հանդէս մը ի Պատիւ Սինոդոս-
ական Հարց *էջ* . 333



ROMA — PIAZZA CAMPO MARZIO, 6 — ROMA

ԲԱՐԻՁԻ ԵՂԲԱՐԻ

Pontificia Fabbrica di Candele da Chiesa e Lumini da notte senza olio.


Candele speciali per la esportazione

Fornitori dell'Arcibasilica Lateranense, della Basilica Vaticana e di tutte le altre principali Basiliche e Chiese di Roma e d'Italia.

Esportazione in tutti i, principali porti del mondo dove la Ditta spedisce la merce franca d'ogni spesa.

E' il più grandioso stabilimento che siasi dedicato esclusivamente alla fabbricazione di Candele per il culto.

Քահանայապետական Գործարան
Մոմեղինաց ի պէտս Եկեղեցեաց կը
պատրաստուին կանթեղք գիշերոյ ա-
ռանց իւրի կը շինուին յատուկ մոմե-
ղէնք արտածութեան համար.
Հայթայթիչք Լատերանեան աւագ
Մայր Եկեղեցւոյ և Վատիկանեան Մայր
Եկեղեցւոյ.
Եւրոպա և ի Հռոմ գտնուած միւս
բոլոր աւագ և գլխաւոր Եկեղեցեաց
Ընկերութիւնս աշխարհիս ամէն գըլ-
խաւոր նաւահանգիստներուն ապրանք
կը շրկէ՝ ծախքն իր վրայ. Ամենամեծ
գործարանն է, որ միայն ի պէտս Ե-
կեղեցւոյ մոմեղինաց շինութեան կը
պարապի:



OTTICO

ROMA — CORSO UMBERTO I, 412 (Palazzo Fiano) — ROMA

ՓՐԱՆԿԻՍԿՈՍ ԲՐԻՈՂԴԻ

Grand assortiment en jumelles pour theatre, campagne et marine.

Jumelles prismatiques de la maison Zeiss.

Verres cylindriques, prismatiques et combinés.

On exécute toutes sortes d'ordonnances des MM. les Professeurs oculistes.

Կը վաճառէ աժան գնով ամէն տե-
սակ զիտակներ թատրոնի, դաշտի և
ծովու համար
Ունի երկաշեայ զիտակք հատուա-
ծակողմ ապակիով ծախ Գործարանէն
և Ապակիներ գլանացիւ, հատուածա-
կողմ և զուգեակք.
Կը կատարուին ամեն այն ճշտու-
թեամբ որ և է յանձնարարութիւնք
Պր. ակնաբուժից.

ՐՕՏԱ, ԷՌՆԱՅԵՐԸ և Ը.

FORNITORI DI SUA SANTITÀ

ROMA — VIA BORGIO NUOVO N. 96 — ROMA


ՐՕՁԱ ԵՐԱՆԱՑԻՈ ԵՒ ԸՆԿԵՐԻ

Fabbrica di Statue Religiose in
qualsiasi materia e dimensione

Invio di Listini, fotografie e pre-
ventivi

Gratis a richiesta

Per telegrammi: Statue — Roma.



Սուրբ Արձաններու

Գործարան


Ամէն տեսակ նիւթէ

և մեծութենէ պատրաստուած

Արձաններու

յուշակն և լուսանկարն

խնդրողին ձրի կը ղրկուի



Guglielmo



Gandungi

ROMA

PIAZZA TOR SANGUIGNA N. 23 — VIA CORONARI N. 1

ԿՈՒՆԻԲԵԼՄԱՆ ՎԱՌՈՒՏԵՆՑԻ

GRAND ASSORTIMENT

Chapelets, Medailles, Reliquaires

Livres de dévotion


et autres articles de religion

Oleographies

MOSAÏQUES ET CAMÉES

Objets des Beaux Arts

Cadres, Bijouteries, Photographies



ՄԵԾ՝ ՎԱՃԱՌԱՍՏՈՒՆ

Վարդարան, միտալ, մասունքի աման

աղօթագրքեր

ուրիշ ջերմեւանդական առարկայներ

մեծ խզատիպ պատկերներ

ՄՐՁԱԲԳ

Գեղարուեստական նիւթեր

նկարներ, գործարկէնք, լուսանկարներ

